

ԱՐՑԱԽՈՒՄ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի տնտեսական-մշակութային կյանքում մետաքսագործության ունեցած կարևոր դերով¹: Մետաքսագործությունը մանածագործության ճյուղ է, մետաքսյա թելեր ստանալու և դրանցից գործվածքներ պատրաստելու արհեստ: Չինաստանում, որը համարվում է մետաքսագործության հայրենիքը, մետաքսե² գործվածքներ պատրաստել են հնագույն ժամանակներից, այնուհետև՝ Մետաքսի ճանապարհով ընթացող առևտրի շնորհիվ հայտնի էր դարձել Միջին Ասիայում, Իրանում, Հայաստանում, Կովկասում, Բյուզանդիայում և այլ երկրներում: Սկսած հին ժամանակներից մետաքսե գործվածքները առևտրի ամենահարգված ապրանքներից էին: Հայաստանի վրայով է կապվել Արևելքը Արևմուտքի հետ մետաքսի առևտրի գործում:

Մետաքսագործությունը նշանակալից զարգացման էր հասել միջնադարյան Հայաստանում³, որի արևելյան Արցախ նահանգում զարգանալու համար այն նույնպես բարենպաստ պայմաններ գտավ:

Առաջին մետաքսի գործարանը Արցախում բացել են Աղաբաբե Արիգոր Խաչատրյանները⁴: Եթե Շուշի գավառում ավելի շատ

¹ Արևելյան Հայաստանի մետաքսագործության մասին մանրամասն տե՛ս Առաքելյան Գ., Շերամապահությունն ու մետաքսագործությունը Ելիզավետպոլի նահանգում (19-րդ դ.), Հայոց պատմությունն (գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2007, N 8:

² Բնական տեքստիլ թել՝ բոժոժի հյուսման ժամանակ շերամորդի մետաքսագեղձերից անջատվող նյութ: Առավել կարևոր արտադրական նշանակություն ունի մետաքսագործական տնտեսություններում բազմացվող թթեմու շերամորդին: Շերամորդի բոժոժից ստացվում է մետաքսահումք:

³ Առաքելյան Բ., Մետաքսագործություն, Հայկական Սովետական հանրագիտարան հ. 7, Եր., 1981, էջ 484, Տե՛ս նաև նույնի՝ Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դդ., հ. 1, Եր., 1958:

⁴ Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում)

զարգացած էր շերամապահությունը, ապա Զիվանշիրի գավառում բամբակագործությունը և խաղողագործությունը⁵: Շուշի քաղաքի մետաքսագործության զագացման մասին տեղեկանում ենք. «1829 թ. Շուշի քաղաքում արտադրվել էր 7200 կտոր մետաքսե գործվածք, որից 740 գլխաշոր, 6100 միաչափ հատված կտորներ, որոնցից կարում էին վարագույրներ, ծածկոցներ, հագուստ եւ այլն: Որակյալ մետաքսաթելի յուրաքանչյուր ստիլի⁶ համար արտադրողին վճարվում էր 24 կոպ. պղնձե դրամ, վատորակ մետաքսաթելի դեպքում՝ 18 կոպ»: 1832 թ. Շուշիում կար 42 մետաքսագործարան: Շաքիում, Շիրվանում և Արցախում մետաքսագործության զարգացման մասին իր գոհունակությունն էր հայտնել Գ. Ռոզենը՝ 1832 թ. դեկտեմբերի 22-ին Ե. Կանկրինին ուղղված իր նամակում: 19-րդ դարի 30-ական թվականների տվյալներով՝ Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի, Գանձակի, Ղուբայի ու Թալիշի մետաքսի տարեկան եկամուտը կազմում էր 15000 փուլ⁷: Շուշիում 1890 թ. Ստացվել է 2,138 փուլ բոժոժ, իսկ 1894 թ.՝ 17,000 փուլ, որից 4,300 փուլը ուղարկվել է արտասահման⁸: Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բոժոժ էին արտադրում, այլ պարզունակ եղանակով ոտնաչարխով մանում էին թել: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ:

Արցախի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882 թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն - Հադրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալա-

19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ 2010, էջ 12:
⁵ Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը, Եր., 2002, էջ 248:

⁶ 1 ստիլը հավասար էր մեկ ֆունտի՝ 400 գրամի:

⁷ Բաղդասարյան Ն., Մետաքսագործության զարգացումը Ղարաբաղում 1810-1860-ական թթ., Լրատու: Գիտական հոդվ. ժղվ/ Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Ստեփանակերտ 2011, N 1, էջ 21:

⁸ Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 248:

տի վարագույրները: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության փորձերը Արցախում կատարվել են 19-րդ դարի կեսերին:

1926 թ. հուլիսի 6-ին կազմակերպվեց մետաքսագործական ֆաբրիկան⁹: 20-րդ դարի 30-ական թվականներին արցախահայ շերամագործները մեծ նվաճումներ արձանագրվեցին և մետաքսի արտադրության բնագավառում¹⁰: Սկսած 1958-91 թթ. հրատարակվել է «Մետաքսագործ» թերթը¹¹: Արցախյան ազգային ազատագրական շարժման սկզբնական ժամանակաշրջանում թշնամին ավերեց մետաքսագործական կոմբինատը:

Արցախը մետաքսագործության և գորգագործության հարուստ ավանդույթներով իր մեծ ներդրումն ունի հայկական արհեստների և մաշակութի գանձարանում:

O. АВАНЕСОВ

К ВОПРОСУ ФОРМИРОВАНИЯ ШЕЛКОВОДСТВА В АРЦАХЕ

H. AVANESOV

TO THE QUESTION OF FORMATION OF SERICULTURE IN ARTSAKH

⁹ Առստամյան Գ., Իմ պատիվ իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2010, էջ 3:

¹⁰ Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը: Ազգագրական ակնարկ, Եր., 1981, հ. 12, էջ 79:

¹¹ Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից 1874-2009 թթ., Ստեփանակերտ, 2010, էջ 61: